



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԴԱՐԱՎՈՐ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիաների միջև 1968 թվականին կնքվում է պայմանագիր, որով սկիզբ է դրվում երկու դարավոր բարեկամ ժողովուրդների միջև գիտության տարբեր բնագավառներում լայն համագործակցության:

Անտարակույս եղբայրական այս համագործակցության արդյունք է 1983 թվականին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության կողմից լույս ընծայված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» ուսումնասիրությունների ժողովածուն: Գիրքը կազմվել է Հայաստանի և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների համատեղ ջանքերով: Ժողովածուի ստեղծման ընդհանուր աշխատանքները Հունգարիայի գիտությունների ակադեմիայի կողմից զբաղվող է փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ժ. Պ. Պախը, իսկ Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից՝ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը:

Ժողովածուն նվիրված է հունգար և հայ ժողովուրդների միջնադարյան և նոր շրջանի պատմական ու մշակութային կապերի ուսումնասիրությանը:

Հայ ժողովուրդը դեռևս մեր թվագրությունից առաջ Ա հապարամյակի կեսերին ստեղծում է իր պետականությունը: Այնուհետև

ապրեքերաբար աշխարհակալ սահմանակից պետությունների՝ դեպի Հայաստան կատարած արշավանքների, բռնությունների, բռնի տիրապետությունների հետևանքով երկրի ապագանակչության մի մասը, դեռևս հին ժամանակներից սկսած, հարկադրված է լինում թողնել հայրենի երկիրը և արտագաղթել օտար երկրներ՝ Առաջավոր Ասիա, Արևելյան Եվրոպա, Եգիպտոս, Հնդկաստան, Ռուսաստան և այլ վայրեր: Իրենց գաղթավայրերում հայերը հիմնում են գաղթօջախներ: Այդ գաղթօջախներից շատերը գոյատևել են երկար դարեր և իրենց նշանակալից հետքը թողել պատմության մեջ: Ո՛ր և ինչպիսի՜ երկրում էլ որ գտնվելիս են եղել հայերը, բարձր քաղաքակրթություն ունեցող թե՛ ոչ, այնտեղ՝ այդ հյուրընկալ երկրում ակտիվորեն մասնակցել են տնտեսական, հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքին, բայց և միաժամանակ չեն կորվել ու խորթացել իրենց մայր հայրենիքից և մայր ժողովրդից:

Հայկական առաջին գաղութը Հունգարիայում, համաձայն հունգարական տարեգրությունների հիշատակության, առաջացել է ԺԳ դարում, միջնադարի Հունգարիայի մայրաքաղաք Էստերգոմի մոտ գտնվող բնակավայրում կամ ավանում և կոչվել է Տերրա կամ Վիլլա Արմենորում:

Բացի Հունգարիայի տնտեսական և մշակութային վարգաքսման առաջընթացին գործունե կերպով մասնակցից լինելուց, հունգարահայերը անժխտելի ծառայություն են մատուցել նաև Արևելյան Եվրոպայում ծավալ-

ված հանրապետական ընդհանուր ճակատ ստեղծելու գործում: Դրա վառ վկայությունն է հունգարախոյնի ակաբի մասնակցությունը Հունգարիան թուրքական լծից ազատագրելու գործում:

Հայերը Հունգարիայում նկատելի առաջադիմություն են հասել նաև իրենց իսկ մշակույթի արթնացման առաքարներով: Այնուհիմնադրել և արգասավոր կանք են ունեցել բազմաթիվ հայկական դպրոցներ, գրադարան-գիմնասիներ, «Արմենիա» հաղագիտական հանդեսը, խնամքով պահպանվել ու ընդորինակվել են հայկական բազմաթիվ ձեռագրեր և արվեստ:

Սույն ժողովածուն, որ բաղկացած է 476 էջից, կազմված է առաջարանից (էջ 5—8) և տասը առանձին ծավալուն ուսումնասիրություններից, որոնք արդյունք են հայ և հունգար գիտնականների գրչի: Դրանք են՝

1. **Էդմոնդ Հույս**—Հայերի արտագաղթի գիտալոր ուղղությունները միջին դարերում և Էստերգոմի հայ գաղութը (էջ 9—49):

2. **Գալան Դինգիրյան**—Հայկական աղբյուրները հունգարների և հայ-հունգարական եպիսկոպի մասին (ժԳ—ժԷ դդ.), (էջ 50—104):

3. **Ստյեն Բոլանջան**—Հայերի մատակցությունը հանրապետական վեպայի ստեղծման և Հունգարիայի ազատագրման գործում (ժԷ դ.), (էջ 105—127):

4. **Անտալ Վորոշ**—Հունգարիայի հայ հասարակությունը ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (1672—1848), (էջ 128—167):

5. **ժոլա Տրոչանի**—Տրանսիլվանիայի հայերի իրավական կացությունը Անադոլյան հրովաշտակի շրջանում (1690—1848), (էջ 168—271):

6. **Էմիլ Նիդերհաուզեր**—Հայկական ազատագրական շարժումները և Արևելյան Եվրոպայի ազգային վերածնության շարժումները (էջ 272—314):

7. **Էվա Բադի-Գևորգյան**—Հայ-հունգարական գրական կապերի պատմությունից (էջ 315—356):

8. **Գաբոր Բոնա**—Հայ պիսկոպականների մասնակցությունը 1848—1849 թթ. Հունգարիայի ազատագրական պայքարին (էջ 357—390):

9. **Մարգո Միխրայան**—1848—1849 թթ. հունգարական հեղափոխությունը և հայ հասարակական միտքը (էջ 391—436):

10. **Առն Ասմարյան**—Հանդիմանող Պետեֆիի հայերեն թարգմանությունները (էջ 437—470):

Յուրաքանչյուր ուսումնասիրության վերջում արված է համառոտագրություն՝ տալով ինքն ինքի, և ծանոթագրությունների ցանկ:

Գրքի վերջում գետեղված են համառոտ տեղեկություններ հեղինակների մասին:

Սույն ուսումնասիրությունների ժողովածուն հրատարակության է պատրաստվում նաև Բուդապեշտում: Այդ գործը գլխավորում է Հունգարիայի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Անտալ Վորոշը, որը նաև ժողովածուի գիտական խմբագիրն է: Հունգար հեղինակների հոդվածները հայերենի է թարգմանել ճանաչված հայագետ-թարգմանիչ Պալ Սպիվաշին, որն ընթերցող հասարակությունը հայտնի է Ավետիք Իսահակյանի և Դարույր Մանկի բանաստեղծությունների ընտրանքի հունգարերեն թարգմանությամբ:

Սույն ուսումնասիրությունների ժողովածուն նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

ՌԵՍՈՒՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԻԲԱՇՏ
ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ
ՀԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆԻՆ

«Սովետական գրող» հրատարակչությունը 1983 թվականին «Հայ Հարսարարություն» հոշարձաններ» մատենաշարով լույս ընծայեց Գալանի Հախկանի ընկական ակնարկը՝ նվիրված վաղ միջնադարի Հարսարարական կորոզներից մեկին՝ Օձունի եկեղեցուն:

Օձունի գմբեթավոր բաղնիկը գտնվում է պատմական Գուգարաց նահանգի Տաշիր գավառի (Հայկական ՍՍՀ Թումանյանի շրջան) Օձուն գյուղում, Սանահինի և Հաղբառի հոշակավոր վանքերի հարևանությամբ: Ենթադրվում է, որ վաղ շրջանում Օձուն համալսարան է Տաշիր գավառի կենտրոնը:

Մենագրության մեջ «Օձուն» անվանն առաջին անգամ հանդիպում ենք Ը դարի աղբյուրներում՝ կապված Հովհան Օձնեցի կաթողիկոսի (717—728) անվան հիշատակության հետ: «Օձուն» անվան ծագումը կապված է «օձուն», «օձեր» բառերի կամ «օձ ունի» արտահայտության հետ: Այդ մասին է վկայում Վաղյան Արևելցին, որը, գրողի նշատեմանը տեղադրությամբ հիացած, գրում է. «... որպես և է հարթ հառաքար, անխոշոր և անխոր վայրն, հովիտ լայնական և ընդարձակ տափարակ, իբրև օձնալ գեղով, և հաճոյ աչաց հայելոյ, են և ծնունդ տեղուն մարդ և անտեսու բոյսը անդառառաց իբրև, խոնարք, օձնալք և մարգնալք զորոյ քրանական զգասական հոգևոր խղովն օձաներ, իբր զվերիշա հանդիսատես ընդդեմ աներևոյ լշխանոյն: Եւ կամ օձուն է որպես և այժմ կոչի պի օձս ունի, թեպետ հովի տեղիքն...»:

Օձունի գմբեթավոր բաղնիկի տիպի նուստով եկեղեցին իր Հարսարարական-գի-

ղարվեստական բարձր արժանիքներով դասվում է վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության նշանավոր հուշարձանների շարքը:

Օձունի եկեղեցին մինչև վերջերս լուրջ ուսումնասիրության, մասնագիտական բավարար խորությամբ լուսաբանման չէր ենթարկվել: Գառնիկ Շախկյանի՝ բազիլիկ այս եկեղեցուն նվիրված սույն ուսումնասիրությունը գալիս է լրացնելու հայ ճարտարապետության կոթողային հուշարձանների վերաբերյալ մեկնագրությունների շարքը:

Թե ե՞րբ է կառուցվել Օձունի եկեղեցին և ո՞ւմ կողմից՝ գիտությանը դեռևս որոշակիորեն հայտնի չէ: Տարբեր հեղինակներ, լինեն դրանք հայ թե օտարազգի, տարբեր կարծիքներ են հայտնում այդ մասին: Այսպես, ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Հովհան Օձնեցին «...ջինէ և եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուայ է առ քաղաքն Լօռէ, և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ անդ դադարէր»: Իսկ Վարդան Արևելցին գրում է. «Հովհան Օձնեցին ջինէր և ինքն ի բապոս տեղիս եկեղեցիս որպէս և յիւրականն աւանի վերկնանմանն խորան, բարի առնելով տանն իւրոյ և ընտանեաց»:

Որոշ հեղինակներ էլ (Ն. Կոնդակով, Ի. Տոլստոյ և ուրիշներ) չիմանալորված կարծիքներ են հայտնում Օձունի եկեղեցու մասին՝ համարելով այն հունա-հռոմեական, բյուզանդական, սիրիական փոխառություններ: Ըստ Ա. Լ. Յակոբսոնի, Օձունի եկեղեցին, տիպի վարձագման առումով, նախորդում է

Ս. Գայանեի և Մրենի եկեղեցիներին:

Օձունի եկեղեցուն տարբեր առիթներով անդրադարձել են Ե. Լալայանը, Լ. Եղիազարովը, Ռ. Մարտիրոսյանցը, Բենուան, Միլլեն, Հ. Գյուկը, Ն. Մառը, Գ. Լևոնյանը, Օ. Շուպին, Լ. Մելիքսեթ-Բեկը, Հ. Եղիազարյանը, Ա. Երեմյանը, Հ. Ոսկյանը, Պ. Կունեոն, Է. Նեուբաուերը, Ա. Նաչատրյանը և ուրիշներ:

Սույն ուսումնասիրության հեղինակ Գառնիկ Շախկյանը իր Երակագրության մեջ գրում է.

«Հայկական վաղ միջնադարյան հուշարձանների հետ Օձունի եկեղեցու համադիր վերլուծության տվյալներով միանգամայն հաստատվում է նրա հորինվածքային բոլոր գծերի տեղական հայկական ակունքներից սերված լինելը: Միաժամանակ ակնհայտ է դառնում Օձունի եկեղեցու և Է դարի գմբեթավոր բազիլիկների հորինվածքային սերտ ընդհանրությունը, նրանց ժամանակագրական լնդունված պարբերացման հիմնավոր և վերջնական լինելը»:

Սույն ուսումնասիրությունը բաղկացած է 84 էջից՝ իր ընդարձակ բավաթիվ ծանոթագրություններով: Վերջում ռուսերեն լեզվով տրված է համառոտագրություն: Ժողովածոում վետեղված են 55 սև-սպիտակ ներդիր նկարներ՝ արված եկեղեցու տարբեր կողմերից, ամբողջական և հատվածական: Ձեռնդված են նաև 13 գծագիր-չափագրություններ:

Գ. Շախկյանի սույն ուսումնասիրությունը նախատեսված է ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար:

